| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Պարզ փորձաքննություն(կարող է փոխարինվել նախագծողի երաշխավորագրով)<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ որում կատարելով համապատասխան իրավական անդրեն) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | չի պահանջվում<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագործ ման ընդունվող շինությունների ոչ եզիզային նախագծի նախնական համաձայնեցում. նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 37-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | Նորմերի համաձայն<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով) |
| 25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում | (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման ենթարկվող պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ իրացրված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահարծողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | չի պահանջվում |

(նշվում են տվյալ օբյեկտի համար գործող օրենքով սահմանված պահանջները՝ ենթակառուցվածքների և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և այլ լիազորված մարմինների մոտ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում բնութագրման ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) մասին)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

• Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին: • Շինությունը նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:

28. Այլ պայմաններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԵԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

11.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2703

## ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով Արմեն Խաչատրյանի հայտը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 02-ի N Ք-4411).

1. Արմեն Խաչատրյանին տալ բնակելի տան, օժանդակ շինության, ավտոտնակի և լողավազանի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

PM6C-7E83-2BFF-64CC

Փաստաթղթի
վավերականության մասին տվյալ
ու էլեկտրոնային ծառայ
ստորեւ ունք հետաքրքիր է
ինքնությունը, սեռը, ծննդյան
ցիր ու կարգով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-5711-25 11.07.2025թ.**

Օբյեկտ **Կառուցում, բնակելի տուն, օժանդակ շինություն, ավտոտնակ, լողավազան,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերանորոգում, ուժեղացում վերակառուցում, գործառնական նշանակության փոփոխություն)

(իակիրճ բնորոշումը, հզորությունը)

**նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ III** նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (հատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Կոտայք, համայնք՝ Աբովյան գյուղ Բալահովիտ Ծաղկունք 5-րդ փողոց 31 հողամաս, 07-018-0066-0001**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ / 2908830396 / ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԹՈՒՄԱՆՅԱՆ Փ., 5ԱՇ, 24ԲՆ**

(պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ 10072024-07-0038**

(կառուցապատվող հողամասով հժ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 11.01.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրությունների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Բնակելի կառուցապատման, բնակավայրերի |
| | (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը) |
| 2. (*) Հողամասի չափսերը | 0.1663 |
| | (հողամասի սահմանները՝ նորմատիվային պահարմանը, մակերեսը (հա)) |
| 3. Հողամասի առկա վիճակը | Հողամասը ծանրաբեռնված է |
| | (տնկիների բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ ցանկապատ) առկայությունը, օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարելավումը և այլն) |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | ներհամայնքային նշանակության ճանապարհ |
| | (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն) |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ: |
| | (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ |

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

| | |
|---|---|
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | Առկա չեն |

(հուշագրման անվանումը)

| | |
|---|---|
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը |

(տեղեկություններ գործող սահմանադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումների, այդ թվում՝ մերձպահպանվող)

## Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն  Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | նախագիծը մշակել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով տրված հողատարածքի սահմաններում: |

(բնութագրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներով, այդ թվում բաղաքաշինական ծածկային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ նորմերով սահմանված սահմանափակող բաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկությունների ելակետային տվյալների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույների ընտրանքների վերաբերյալ)

| | |
|---|---|
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | 3,0 |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | ըստ նորմերի |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | մինչև 8,0 մ |

(առավելագույն հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀ ՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարտադրանքի նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

| | |
|---|---|
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | 0,4 |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | մինչև 40 % |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) | 60 % և ավելի |
| 9.7 այլ պահանջներ | • Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները • Համաձայն Աբովյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման՝ շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները |
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | Առկա չէ |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | Համաձայն նորմերի |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ |

| | |
|---|---|
| 12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում | Համաձայն նորմերի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2 (*) Էլեկտրամատակարարում | Համաձայն նորմերի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | Համաձայն նորմերի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | Համաձայն նորմերի<br>(հոդվածի N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված եզակետային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | Առկա չեն |
| 12.6. աղբահանություն | համայնքային |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | Կազմակերպել տարածքի ջրահեռացում:<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել<br>(լանդշաֆտային պահանջների վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, առտաղին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | Ըստ նախագծի<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներներ | Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | Ըստ նորմերի |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները<br>(շրջակա միջավայրը վնասազերծող ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | Ըստ նորմերի<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քարաքաշին տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | մինչև 11.01.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ.<br>(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Պարզ փորձաքննություն<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության ենթակա կամ նախագծողի նախաձեռնությամբ՝ ինչում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | չի պահանջվում<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում չահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում. նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | Նորմերի համաձայն<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով) |
| 25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում | (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման ենթակա պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահանողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | չի պահանջվում |

(նշվում են տվյալ օբյեկտի հատկանիշների օրինակով սահմանված առանձնահատկությունները՝ հողօգտագործման և բնության առանձնահատկության և այլ լրացուցիչ մասին, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում քաղաքական պետական պաշտոնատար անձի անվանումը)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

• Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին: • Շինությունը նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:

28. Այլ պայմաններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

11.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2702

## ԴԱՎԻԹ ՆԻԿՈՅԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 35/5 ՀԱՍՑԵՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշման, հաշվի առնելով Դավիթ Նիկոյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 03-ի N Ք-4442).

1. Դավիթ Նիկոյանին տալ բնակելի տան, օժանդակ շինության և պարսպի կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Դավիթ Նիկոյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Աբովյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Նիկոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

PMB8-2298-7FB9-D3E6

Փաստաթղթի
վավերականությունը կարող եք ստուգել
ՀՀ էլեկտրոնային կառավարման
պաշտոնական կայքում՝
https://www.e-gov.am/
gov.am կայքում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N ՇԹ/758/10082-25 09-07-2025**

Տրված է կառուցապատող **ԴԱՎԻԹ ՆԻԿՈՅԱՆ (3304740491, ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՔԱՆԱՔԵՌ 5 Փ. 2 ՆՐԲ., 17Տ),**

հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Պտղնի 15-րդ փողոց 1-ին նրբանցք 35/5 հողամաս**

(իրավաբանական անձի անվանումը, անհատական ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ **Բնակելի տուն, օժանդակ շինություն, պարիսպ,** աշխատանքի տեսակը՝ **կառուցում, Ռիսկայնության աստիճանը՝ II**

(շինության նշանակությունը, ռիսկայնության դասին պատկանելը, հասցեն, քանակները, հավելյալ ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակել են «»,

**ճարտարապետական մաս՝ «ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ(ԹԱԳՈՒՀԻ ՀՄԱՅԱԿՅԱՆ, արտոնագիր՝ ԱԲԴ-Ա-0134)**

**կոնստրուկտորական մաս՝ «ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ(ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ, արտոնագիր՝ ԿԵԴ-Ա3-025)** կողմից

(հանրային ծառայության մասին օրենքով սահմանված կարգով փորձագիտական եզրակացություն ստանալու դեպքում՝ փորձագիտական եզրակացության համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(ոչ էներգետիկ փորձագիտության դեպքում)

ընկերության(ների) կողմից

(ոչ էներգետիկ փորձագիտության դեպքում՝ ընկերության (մասնագետների) անվանումը, փորձագիտի հավատարմագրի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ N25/148 «ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ընկերության կողմից

(օրենքով սահմանված դեպքերում՝ համապատասխան պատասխանատու կապալառուի երաշխավորության պարտականության հաստատում)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 29-05-2025թ ՆԹ-3935-25 Աբովյան համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված 09-07-2025թ. հ. 322622 նախագիծը(երը)

(այլ համաձայնեցումների անվանումները և համաձայնեցման տվյալները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **2 տարվա** ընթացքում՝

(շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական անտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը

☐ ավարտական ակտը տրամադրումից ամիս.

☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը.

3. Շինարարության վարման մատյանը բացված է **19** էջից, կարված և պրոշմակնքված է **Աբովյան համայնքի ղեկավարի** կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 168-րդ կետով նախատեսված դեպքերում)կողմից

(նշվում են նշված անձանց հետ համաձայնեցված մարմինները, դրանց տվյալները)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(նշվում են համաձայնեցման մարմինները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, ապահովում է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը 2

(նշվում են նախագծատեխնիկական, հողային, շինհրապարակի աշխատանքների կազմակերպման)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ հասցեներում տեղակայված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

(նշվում են, ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հասցեական տվյալները, ինչպես նաև քանդման աշխատանքներն իրականացնող անձի տվյալները)

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական՝ _____) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայությունը:**

(նշվում են նախանշված պահանջով և նպատակադրվող նպատակներին հասնելու համար)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԷԴՈՒԱՐԴ ԲՍԲՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

09.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2701

## ՊՈՂՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշման, հաշվի առնելով Պողոս Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի հունիսի 25-ի N Ք-4264).

1. Պողոս Սարգսյանին տալ կիսանկուղը՝ ավտոտնակի վերակառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Պողոս Սարգսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 45 000 (քառասունհինգ հազար) դրամ և 900105201496 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրքեր՝ շինարարության և քանդման թույլտվությունների համար:
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Աբովյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պողոս Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

PMFE-54F1-14C7-6AF5

Փաստաթղթի
վավերականությունը և ստուգումն
ու էլեկտրոնային տարբերակի
ներբեռնումը հնարավոր են
իրավասու մարմնի
պաշտոնական կայքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N ՇԹ/751/10083-25 09-07-2025**

Տրված է կառուցապատող **ՊՈՂՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ (3208890338, ԿՈՏԱՅՔ, ՆՈՐ ՀԱՃԸՆ, ԳԵՏԱՄԵՋ, 4 Փ., 9S),**
հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Հանրապետության պողոտա 8/10 շինություն**

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայության համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ **Վերակառուցում, կիսանկուղի վերակառուցում ավտոտնակի,** աշխատանքի տեսակը՝ **վերակառուցում, Ռիսկայնության աստիճանը՝ II**

(օբյեկտի անվանումը, շինարարության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «»,

**Ճարտարապետական մաս՝ «ԷՍԿԱՐՊ» ՍՊԸ(ԿԱՐԵՆ ՀՈՎԵՅԱՆ, արտոնագիր՝ ԱԲԴ-Ա-0122)**
**Կոնստրուկտորական մաս՝ «ԷՍԿԱՐՊ» ՍՊԸ(ԳԱՅԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, արտոնագիր՝ ԿԵԴ-Ա2-016)** կողմից

(նախագծային փաստաթղթերի մշակումն իրականացրած անձանց անվանումը, ինքնության հաստատող)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(եզրակացության ամսաթիվը)

ընկերության(ների) կողմից

(եզրակացությունը տրած անձանց անվանումը, իրենց կարգավիճակը)

կամ

Նախագիծը թողարկող ձեռնարկության կատարողական գործադիր տնօրենի տեղակալ՝ N5 «ԷՍԿԱՐՊ» ընկերության կողմից

(նախագիծը թողարկած ձեռնարկության անվանումը, ինքնության հաստատող փաստաթղթի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների՝

Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 26-03-2025թ ՆԹ-1578-25
Աբովյան համայնքի ղեկավարի ոտ համաձայնեցված 09-07-2025թ. հ. 316844 նախագիծը(երը)

(որքան ժամանակով են տրվել և համաձայնեցվել ժամանակները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **2 տարվա** ընթացքում՝

(շինարարության տևողությունը ամիսներով)

Ներառյալ ավարտական անտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը

☐ ավարտական անտի տրամադրումից ամիս.

☑ ավարտական անտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման սահմանը բաղկացած է **19** էջից, կարված և դրոշմակնքված է **Աբովյան համայնքի ղեկավարի** կողմից:

(որքանով համապատասխանում)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)կողմից

(նախագծային աշխատանքների հանձնարարագրի անվանումը, կցել է նշում տրվել)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(նշել օրենքով նախատեսված համաձայնեցնող մարմնի անվանումը մեկ)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պայմանները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը **1**

(նշվում են մասնագիտացումները, որոնցով, ըստ անհրաժեշտության, պետք է ապահովել)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ հասարակության տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝ **Կիսանկուղի ծածկը 13.128 ք.մ. և պատերը 7.576 խ.մ.**

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական բնութագրերը, ինչպես նաև քանդման, հողի տեղահանման, շրջակա միջավայրի և այլ

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական **18052023-07-0263**) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայությունը**:

(նշվում են իրականացման ընթացքում և ավարտի պայմանները, ինչպես նաև պահանջները շրջակա միջավայրի

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և գուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

(ստորագրություն, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

09.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2700

## ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի 8.4-րդ կետի.

1. Հաստատել Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-40) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հուլիսի 10-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Լիազորված անձ նշանակել Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վանիկ Բաբաջանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի 2025 թվականի
հուլիսի 09-ի N 2700 որոշման

ԿԱԶՄ

# ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| Հ/հ | անուն, ազգանուն | կազմակերպություն | պաշտոն |
|---|---|---|---|
| 1 | Հարություն Ալեքսանյան | Կոտայքի մարզպետարան | Վարչության պետ |
| 2 | Սուսաննա Մկրտչյան | Կոտայքի մարզպետարան | Գլխավոր մասնագետ |
| 3 | Աշոտ Ֆելիկյան | Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավարի խորհրդական |
| 4 | Ռոզա Նալթակյան | Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմ | Մամուլի քարտուղար |
| 5 | Արմեն Քոսակյան | Համայնքի ավագանի | |
| 6 | Արմինե Թովմասյան | «Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | Հաշվապահ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2699

## «ԱԳՈՒԼԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 113-Ն, 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշումների, հաշվի առնելով «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 08-ի N S-1713).

1. Թույլատրել «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Երևան-Սևան մայրուղի թիվ 2 հասցեում տեղադրել արտաքին գովազդ (Թույլտվություն N 92 կցվում է):
2. Հաստատել արտաքին գովազդի էսքիզները՝ համաձայն հավելվածի:
3. «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105231345 հաշվեհամարին վճարել 21 600 (քսանմեկ հազար վեց հարյուր) դրամ տեղական տուրք՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 92

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ ***09 հուլիսի 2025 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
***Այլ արտաքին գովազդի տեղադրում:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«ԱԳՈՒԼԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ Կոտայքի մարզ Առինջ գյուղ , ՀՎՀՀ՝ 03506375:***

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝
***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Վերին Պտղնի գյուղ Երևան-Սևան մայրուղի թիվ 2, 4.8 քմ:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***01 հուլիսի 2025թ.***-ից մինչև ***01 հոկտեմբերի 2025թ.***-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

*QR կոդի միջոցով կարող եք սփուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում*

Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2025 թվականի հուլիսի 09-ի N 2699 որոշման

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶՆԵՐ




0.5 մ

2 մ

1 մ

1 մ

**Ընդհանուր մակերես՝ 4.8 քմ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2698

## «ԱԳՈՒԼԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշումների, հիմք ընդունելով «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 08-ի N S-1714).

1. «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Երևան-Սևան մայրուղի թիվ 2 հասցեում գտնվող (500 և ավելի քառակուսի մետր) սրճարանում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 216 կցվում է):
2. «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105231048 հաշվեհամարին վճարել 45 500 (քառասունհինգ հազար հինգ հարյուր) դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱԳՈՒԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 216

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ) ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ**

***Տրված՝ 09 հուլիսի 2025 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«ԱԳՈՒԼԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ Կոտայքի մարզ Առինջ գյուղ , ՀՎՀՀ՝ 03506375:***

Գործունեության իրականացման վայրը՝
***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք Վերին Պտղնի գյուղ Երևան-Սևան մայրուղի թիվ 2 սրճարան:***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***01 հուլիսի 2025թ.***-ից մինչև ***01 հոկտեմբերի 2025թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

*QR կոդի միջոցով կարող եք սրուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2697

## «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշումների, հիմք ընդունելով «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Ռոբերտ Զեյնալյանի հայտը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 07-ի N S-1704).

1. «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 1/70 հասցեում (21.56 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 217 կցվում է):
2. «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 6 500 (վեց հազար հինգ հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 217

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ) ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

***Տրված՝ 09 հուլիսի 2025 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք ք. Աբովյան Հանրապետության փ. 1 շ. 70 բն., ՀՎՀՀ՝ 03547267:***

Գործունեության իրականացման վայրը՝
***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք ք. Աբովյան Հանրապետության պողոտա թիվ 1/70:***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***01 հուլիսի 2025թ.***-ից մինչև ***01 հոկտեմբերի 2025թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

*QR կոդի միջոցով կարող եք ստուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2696

## «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 110-Ն, 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշումների, հիմք ընդունելով «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Ռոբերտ Զեյնալյանի հայտը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 07-ի N S-1703).

1. «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 1/70 հասցեում (21.56 քառակուսի մետր մակերես) հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն (Թույլտվություն N 146 կցվում է):
2. «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201868 հաշվեհամարին վճարել 5 000 (հինգ հազար) դրամ՝ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՀՍԿ-Ի - 146

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Տրված՝ ***09 հուլիսի 2025 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
***Հանրային սննդի կազմակերպում և իրականացում:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք ք. Աբովյան Հանրապետության փ. 1 շ. 70 բն., ՀՎՀՀ՝ 03547267:***

Գործունեության իրականացման վայրը,
***ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք ք. Աբովյան Հանրապետության պողոտա թիվ 1/70:***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***01 հուլիսի 2025թ.***-ից մինչև ***01 հոկտեմբերի 2025թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

*QR կոդի միջոցով կարող եք սփուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2695

## «ԱՐՏՈՒՐ ԱԴԱՄՅԱՆ ՍՄԲԱՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշումների, հիմք ընդունելով «Արտուր Ադամյան Սմբատի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 07-ի N Ք-4489).

1. «Արտուր Ադամյան Սմբատի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 100/1 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 32 կցվում է):
2. «Արտուր Ադամյան Սմբատի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է 900105201843 հաշվեհամարին վճարել 30 000 (երեսուն հազար) դրամ՝ տեղական տուրք:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արտուր Ադամյան Սմբատի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՏՀՎ - 32

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***09 հուլիսի 2025 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
***Տեխնիկական հեղուկների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման և (կամ) բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«ԱՐՏՈՒՐ ԱԴԱՄՅԱՆ ՍՄԲԱՏԻ» ԱՁ, ՀՀ, Տավուշի մարզ Բերդ համայնք գ. Ներքին Կարմիր Աղբյուր 3 փ. 4 տ., ՀՎՀՀ՝ 87090243:***

Գործունեության իրականացման վայրը՝
***ՀՀ, Կոտայքի մարզ Աբովյան համայնք ք. Աբովյան Երևանյան փ. թիվ 100/1, սպասարկման օբյեկտ:***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***01 հուլիսի 2025թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2025թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

*QR կոդի միջոցով կարող եք սփուգել թույլտվության վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2694

## ԱՐՄԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշման, հաշվի առնելով Արմեն Անդրեասյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի հունիսի 26-ի N Ք-4291).

1. Արմեն Անդրեասյանին տալ առևտրի կենտրոնի, պահեստի, սանհանգույցի և պարսպի քանդման թույլտվություն (քանդման թույլտվությունը կցվում է):
2. Արմեն Անդրեասյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201496 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ քանդման թույլտվության համար:
3. Քանդման աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Աբովյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Անդրեասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

PMDD-ED4F-DD3D-7E28

Փաստաթղթի
մասին տեղեկություններ, տես՝ www.e-gov.am
ու էլեկտրոնային տեղեկությունների
ստուգման ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N ՔԹ/751/89-25 09-07-2025**

Տրված է կառուցապատող **ԱՐՄԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ /3202910329/, ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, Է. ԱՎԱԳՅԱՆ Փ., 1/40S** հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Հատիսի փողոց թիվ 1/30/43 առևտրի սրահ,** վկայականի համարը՝ **05062023-07-0114:**

(տիտղոս տրամադրվածի անձի տվյալները, ազգանունը, անունը, հայրանունը, և գտնվելու, բնակության վայրը, հողամասի գտնվելու վայրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի ծագումն ու պրակտիկի վկայականի համարը)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա **առևտրի կենտրոնի, պահեստի, սանհանգույցի և պարսպի քանդման նախագիծ** հավելվածների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության շինությունների **05062023-07-0114** սեյսմակայունացնող քանդման (ապամոնտաժման) աշխատանքներն իրականացնելու համար:

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա տարածքները, տրանսպորտային հարաչափերը, ընդհանուր, բնակելի, օգտակար մակերեսը, հարկայնությունը, շինությունները և այլն)

Քանդումն (ապամոնտաժումն) իրականացվում է՝ նպատակով՝ **2 ամսվա** ընթացքում:

(նշվում է քանդման նպատակը և ժամկետը՝ աշխատանքների տեսակները)

1. Նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են

**1) «ՍԵԳԱՍՏ» ՍՊԸ (ճարտարապետ՝ ԷԴԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ, արտոնագրի համար՝ ԱԲԴ-Ա-067)**

կողմից.

(նշվում են նախագծային աշխատանքների կատարողների ազգանունները, ինչ մասնագիտությամբ)

2) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների՝ **ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ** հետ 09-07-2025 համաձայնեցված քանդման նախագիծ N Ն/ՔԹ/751/89-25

(նշվում են համաձայնեցման անվանումները և համաձայնեցման ամսաթվերը)

3) ստացել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության կամ մասնագիտական դրական եզրակացություններ՝

կամ փորձաքննություն չի պահանջվել՝ կապալառուի երաշխավորագրով՝

**1) «ՍԵԳԱՍՏ» ՍՊԸ 08 ճարտարապետական մաս**

(նշվում է ում կողմից է կազմվել եզրակացությունը կամ երաշխավորագրի ներկայացնող ճարտարապետի անվանումը)

Քանդման (ապամոնտաժման) ենթակա են միայն թույլտվության մեջ նշված օբյեկտները:

2. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը նախքան աշխատանքներն սկսելը, ինչպես նաև դրանց ընթացքում, պարտավոր է հաղորդակցվել վնասների տուժողների հետ՝ նրանց համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ

2) թույլտվության հիման վրա ձեռնարկած աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան.

3) պատմամշակութային հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման աշխատանքների

իրականացման դեպքում ապամոնտաժման թույլտվությունը տրվում է՝ հիմք ընդունելով՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը (նշվում է ՀՀ կառավարության որոշումը՝ հուշարձանը նպատակահարմար տարածք տեղափոխելու վերաբերյալ),

բ. պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի՝ հուշարձանի տեղափոխման նախագծային առաջադրանքը (տեխնիկական բնութագիրը) և նրա դրական եզրակացությունը նոր տեղում հուշարձանի վերականգնման (վերստեղծման) առաջադրանքի, տեխնիկական և հնագիտական պայմանների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ սահմանված պահանջների ապահովմամբ կազմված նախագծային փաստաթղթերը,

գ. վերականգնման տարածքի հատկացման փաստաթղթերը՝

3. Այլ պայմաններ

(նշվում են հրավերին համապատասխան և վերոնշյալներով նախատեսված այլ պայմանները)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԵՂՈՒԱՐԴ ՔԱԲՈՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

09.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 2693

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 371 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 30 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 23-ի N 03-Ն որոշման, հիմք ընդունելով «ԷՅՋ-ԴԻ-ԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի ապրիլի 09-ին լրամշակված և փոփոխված աշխատանքային նախագիծը, հաշվի առնելով Լուսինե Ղուկասյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի մայիսի 29-ի N Ք-3537).

1. Համաձայնեցնել Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 25-ի «Լուսինե Ղուկասյանին շինարարության թույլտվություն տալու մասին» N 371 որոշմամբ հաստատված N 30 շինարարության թույլտվությամբ սահմանված նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությունը և Լուսինե Ղուկասյանին տալ շինարարության թույլտվություն:
2. Լուսինե Ղուկասյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 45 000 (քառասունհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Ղուկասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հուլիսի 09
ք. Աբովյան

Փաստաթղթի վավերապայմանության ստուգման ու էլեկտրոնային բնօրինակին տեղեկատվության ներթեռնման հնարավոր է իրականացնել միայն էլեկտրոնային փոխանակման միջոցով՝ հետևյալ հղումով՝ PM9D-C827-23E7-2357:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N ՇԹ/751/10072-25 11-07-2025**

Տրված է կառուցապատող ԼՈՒՍԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ / 5312760277 / ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, ՍԵՎԱՆԻ Փ., 4/1Շ, 84ԲՆ, հողամասի գտնվելու վայրը՝ Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Սևանի փողոց 2/15 շինություն

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ Կառուցում, Կիսակառույց շինությունը որպես գրասենյակի վերակառուցում, Պարագծային չափերը՝ 9.2x4.06մ, մանսարդային հարկով և կիսանկուղով՝ Հ-6մ, 90.24 քմ մակերեսով, Ռիսկայնության աստիճանը՝ II

(օբյեկտը անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագրիր, հումանական ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են **Աշխատանքային նախագիծ** փուլով **«ԷՅՋ ԴԻ ԷՄ»** ընկերության(ընկերությունների) կողմից.

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ N49/25 «ԷՅՋ ԴԻ ԷՄ» ընկերության կողմից

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ՝

Նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 09-11-2023թ 717 Աբովյան համայնքի ղեկավար

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **մինչև 25.01.2026թ.** ընթացքում

(նշել շինարարության նորմատիվային տեւողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

☐ ավարտական ակտի տրամադրումից

☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

